պետութեան նախագահի պաշտօնը կարող է եւ ժառանգական լինել, եթէ մեր նախկին արքայական տներից մէկն ու մէկի ժառանգը յանկարծ յայտնուի (յոդ. ԾԲ.):

Ակնարկը վերաբերում է Հերակլ Բ-ին, որին — ինչպէս ասացինք — նա համարում էր Բագրատունեանց օրինական ժառանգը եւ որի հետ նա անձնական ծանօթութիւն եւ նամակագրութիւն ունէր:

Այդ հակասութիւնը թերեւս կարելի է բացատրել նրանով, որ մեր հեղինակը օրէնքի եւ օրինականութեան ջերմ պաշտպան լինելով, բնականաբար չէր կարող ժխտել որեւէ մէկի օրինական իրաւունքները հայոց գահի նկատմամբ, եթէ նա իրօք ունէր այդ իրաւունքները: Միւս կողմից՝ լինելով շովէն ազգասէր մարդ, նա յարգանք էր տածում դէպի մեր հին թագաւորական տները, մանաւանդ որ հայոց պատմութիւնից նրան յայտնի են մի շարք անգամ ինքնակալ միապետներ — Վաղարշակ, Արտաշէս, Տիգրան, Արշակ եւն. — որոնք մեծ բարիք են բերել հայ ժողովրդին: Եւ երրորդ՝ նա Անգլիայի օրինակով տեսնում էր, որ միապետութիւնն էլ կարող է օգտակար լինել իր երկրին, եթէ միապետը կառավարում է օրէնքով կամ այլ խօսքով՝ եթէ սահմանադրական միապետ է:

Բայց նորից կրկնում ենք, որ իր համոզմունքներով նա ընդհանրապէս ջերմ հանրապետական է եւ կառավարութեան այդ ձեւն էլ առաջարկում է ազատ անկախ Հայաստանի համար: Միապետութեան փոխարէն — ժողովրդապետութիւն. միապետ թագաւորի փոխարէն — ժողովրդական կամք–օրէնք:

Ահա այն գլխաւոր հիմքերը, որոնց վրայ նա առաջարկում է կանգնեցնել ազատագրուած Հայաստանի պետականութեան շէնքը:

գ) Օրէնք

Հայաստանի փրկութեան եւ հայ ժողովրդի երջանկութեան ամենագլխաւոր միջոցը — Շահամիրեանի կարծիքով — օրէնքն է, որը եւ կազմում է «Ար. Փառաց»ի ծանրութեան կենտրոնը: Գրքի ընդարձակ ներածութեան մէջ, մի ծայրից միւսը, դուք ափոուած էք տեսնում նրա դատողութիւններն ու դիտողութիւնները օրէնքի մասին, յաճախ նոյն մտքերը կրկնուած կամ տարբեր ձեւերով արտայայտուած:

Տեսնենք, թէ նա ի՞նչ ստորոգելիներ կամ բնորոշիչ յատկութիւններ է վերագրում օրէնքին. այս մէկ. եւ երկրորդ՝ թէ արդեօք օրէնքը կարո՞ղ է մարդկային երջանկութեան աղբիւր ծառայել եւ եթէ այո՛ — ի՞նչպէս, ի՞նչ ձեւով:

Շահամիրեանի անկախ Հայաստանում օրէնքը ամբողջ ժողովրդի 1) եւ միեւնոյն ժամանակ նաեւ իւրաքանչիւր անհատ–քաղաքացու կամքի արտայայտութիւնն է: Ուրիշ խօսքով՝ ժողովուրդ–հաւաքականութեան եւ քաղաքացի անհատի կամքերը միանալով եւ իրար հետ ձուլուելով, կազմում են մի ներդաշնակ ամբողջութիւն, որ է օրէնքը: Օրէնքը ժողովրդի կամքն է, որովհետեւ օրէնսդիր մարմնի մէջ ինքը ժողովուրդն է, որ բաղմած է յանձին իր ներկայացուցիչների: Օրէնքը նաեւ անհատ–քաղաքացու կամքն է, որովհետեւ իւրաքանչիւր քաղաքացի իրաւունք ունի օրէնսդիր մարմնի անդամ լինելու, հետեւապէս նա ինքը այդ մարմնի մէջ բաղմած է իրաւապէս եւ իր անհատական կամքը դրել է հանրային կամք–օրէնքի մէջ:

Օրէնքի միւս յատկանիշն այն է, որ ամէնքը ենթարկուում են նրան անխօս, կուրօրէն: Անհատի ազատութիւնը Ռուսսոյի նման հասկանալով, նա հակասութիւն չի դտնում անձի ազատութեան եւ օրէնքին ենթարկուելու միջեւ, որովհետեւ անհատը օրէնքին ենթարկուելով, իրենից դուրս գտնուած որեւէ ոյժի չէ, որ ենթարկուում է — որը կը լինէր, յիրաւի, անձի ազատութեան խախտում — այլ իրեն, իր սեպհական կամքին, քանի որ օրէնքը — ինչպէս տեսանք — ինքն է դրել, նաեւ իր սեպհական կամքի արտայայտութիւնն է նա:

Երրորդ յատկութիւնը՝ որ օրէնքը մէկ է ամէնքի համար — սկսած պետութեան ամենաբարձր պաշտօնեայից մինչեւ յետին մուրացիկը: Անձնաւորութիւնը, ծագումը, դասակարգը, հարստութիւնը, պետական–հասարակական դիրքը, պաշտօնը որեւէ արժէք չունեն նը-

1) Օրինագծերի քննութեան ժամանակ մենք կը տեսնենք, որ հեղինակը, նման դէպքերում, «ժողովուրդ» կամ «ազգ» ասելով՝ հասկանում է երկրի բնիկ եւ հայ–լուսաւորչական ազգաբնակութիւնը միայն: